Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երգ-երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի(2դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ), բնագիտության (4 դասաժամ), քիմիայի (11 դասաժամ), մաթեմատիկայի (12դասաժամ), ֆիզիկայի(3դասաժամ),կենսաբանության(11 դասաժամ), տղաների տեխնոլոգիայի (4 դասաժամ) և մայրենիի(13 դասաժամ) թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության **նոյեմբերի 16-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ,**ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 5-ին՝ժամը14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցում :

Հասցե ՝Լոռումարզ, գ.Կաթնաղբյուր, 8-րդ փ, 1-ին նրբ. 5շենք:

Տեղեկությունների համար զանգահարել (077)78-91-96 հեռախոսահամարով: